

Թեան գժուարակնձիռն գիտութեան լուսաւոր ձամբայ մը կը բանայ, զորն որ իրաւապէս Ֆիուրիէ աստեղաբաշխը, որ Գաղղիոյ գիտութեանց ձեմարանին մէջ | ափլասայ ներքողեանը կարդաց, Ի՞մագեսդ կամ Եշամեծ ժլէ դարուն կ'անուանէ : | ափլաս այս գործքիս մէջ գեղեցիկ կարգաւ մէկտեղ հաւաքեց ինչ որ մինչև իւր ժամանակը չափաբերութիւնն ու բնական գիտութիւնը հաստատեր էին իբրև ձշմարիտ, և ինչ աստիճանի աստեղաբաշխութեան հիմն ու հաստատութիւն կրնան ըլլալ, և իւր գեղեցիկ գիւտերովը այն կատարելութեանն հասուց տիեզերաց գիտութիւնը, որ թէպէտ երկնից երեսը մինչեւ հիմնայ մեծամեծ գիւտեր եղան, տակայն | ափլասայ հեղինակութենէն և ոչ կէտ մը նուազեցաւ, և է միշտ իբր պատգամատու բնութեան գաղտնի օրինացը իւր լուսաւոր տարածներով, մանաւանդ թէ ետեի գիւտերը իւր գործքը աւելի զարգացուցին :

Ի՞ացադրութիւն դրասեեան տիեզերաց գրքին մէջ | ափլաս մասնաւոր կերպով ջանացեր է մէկ հատորի մը մէջ բովանդակել աստեղաբաշխութե բոլոր սկզբառունքները, գուրս թօթափելով խորին ու դժուարակնձիռն հաշիւները՝ որոնց վրայ հիմնեալ է այս գիտութիւնն, և անոնց հետ կը խօսի որնիք որ չափաբերական գիտութեանց խորերը չեն մըտած, և կ'ուզեն աստեղոսբաշխական բարձրագոյն ծանօթութիւններուն տեղեկանալ :

Տիմոթէոսի իմաստասիրի հարցին թէ ուր ուսար, կամ ովէ վարդապետն քո - տու . Ատեանն Աթենացւոց և ձեմարանն . զայս ասելով ցուցանէ թէ ջանք և հմառութիւն իրին՝ վեհագոյն է ամենայն վարդապետութեանց :

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄՐՈՒԵՍՑ ԵՒ ՃԱՑՄՈՒԹԻՒՆ

‘Ի՞ր հրաէ մորով գործէ .

Ի՞՞ԴՐԱՑԻ Ֆիելիփ անունով Ճարտարապետին մէկը կրակ մարելու գործի մը հնարեր է, զորն որ ինքը իրահոնչացունող՝ կ'անուանէ : Ի՞յս գործին այնպէս շինուած է որ կրակին վրայ գոլորշիքի սաստիկ յորձանք մը վազցունելով մէկէն կը մարէ : | ոնտրա այս գործոյս մեծ փորձ մը եղեր է, որուն յաջողութիւնը ամէն տեսնողները զարմացուցեր է : Ի՞յս բանիս համար մասնաւոր փայտէ տուն մը շինել տուեր են, երկու գստիկն բարձրութեամբ, բոլոր նաւթով օծած ու մէջն ալ փայտի տաշեղներովլեցուն . և երբոր տունը ամէն կողմանէ կրակ առած կը բռընկէր, իրահոնչացունողը իւր գոլորշիէ յորձանքը սաստիկութեամբ մը տան վրայ արձակեց, որով հրդեհեալ տունը քանի մը վայրիկնի մէջ բոլորովին մարեցաւ :

Ի՞նգինոյ կառավարութիւր մասնաւոր յանձնարարութեամբ խել մը այս գործիքէս շինել տալ ապրսալուց արքունի շէնքերուն համար . նոյնպէս հրդեհներու դէմ ապահովութեան ընկերութիւններէն շատը հետզհետէ այս գործիքէս շինել տալու ետեկ են . Ը ատ ատեն չէ որ այս գործիքէս խել մը Պանիա ալ խրկուեցաւ, մասնաւորապէս արքունի ծովարանին համար :

Ալ փափագինք որ Պօլսոյ մեր ազգային եղարքն ալ այս գործիքս ստանային, մանաւաւանդ թէ տէրութեան առաջարկէին այս գործիքէս խել մը բերել տալու, որ անպարտ տեղը Պօլսոյ հարուած տեպուած հրդեհներուն գէմ զօրաւոր միջոց մը կ'ըլլար, որուն գինը, իրեն պզտիկութեանն ու մեծութեանը համեմատ, Յէն ինչուան Դ լիրէ ստերլին է :

Պատերայի հոկայազն արքանը :

ՊԱՏԵՐԱՅԻ Հսկայաձև արձանը ,  
որ Սայտինկ անունով լերան վրայ պիտի կանգնուի , արդի արձաններուն մէջ ամենէն մեծն է : Ամէն մէկ կտորը ձուլարանէն իւր տեղը տանելու համար 16 ձի քաւեր . զլխոյն մէջ երկու հոգի հանգիստ Խրոպացւոց ժողով ըստած պարը կրնան խաղալ . քթին մէջ ալ նուագածու մը թէ որ ուզէ կրնայ նրատիլ : Ա բայի զգեստին թանձրութիւնը , որ մինչև ծնկուըները կը հասնին , 6 քթացափ է . իսկ զգեստին վարի շրջապատը 200 մեդր է : Արձանին ձեռքն եղած յաղթութեան սոսակը 100 քրիտալ կը կըռէ . հեղինակն է Շ վանթալ էրանունով գերմանացի երևելի ձուլիքու

ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ՊՐԵՄԻ

Ե՞րենի սբությունն : Դէմ նոր դեղ :

ԱՆԴՐԱԾԱՑԻ ՈՒՅԼԵԼՄ] թգդըլ անու-  
նովը բնակչոյն մը մօտերս երևելի փորձեր  
ըրեր է ցորենի որդերը ջալդելու հա-  
մար, որոնք երկրագործութեան մեծ  
պատիճներէն մէկն են, և որ և իցէ կեր-  
պով մարդ չէ կրցեր բոլորսվին ասոնց  
դէմն առնուլ: Հեղինակը կ'ըսէ թէ  
խել մը այս որդերէն բերել տուի իրենց  
բնական վիճակին մէջ, այսինքն այն  
հողէն ուսկից որ կը գոյանան: Վաաջին  
փորձով մը տեսայ որ, կ'ըսէ, ասոնց  
դէմ ամենէն զօրաւոր թոյնելն ալ զոր-  
ծածելով՝ չի սատկեցան. մկրնդեղային  
և մնդկային բաղադրութիւնները ա-  
սոնց դէմ բան մը չլրցան ընել. զանոնք  
այս այլ և այլ թիւնալից խառնուրդնե-  
րուն մէջ խօթելով՝ վրանին զգալի տար-  
բերութիւն մը չի տեսնուեցաւ, մանա-  
ւանդ թէ աւելի կենդանութիւն ցըցու-  
ցին: Վարնցմով որ չի յաջողեցաւ նէ

1 Գ. Պ. Charançon. Իւ. Punteruoli. ՏՀ. Պոլ-  
յան, պիետի:

ծծմբային թթու ու քորակային թթու  
գործածեր է . և թէպէտ այս թթու  
ներս վերջապէս զանոնք սպաններ են ,  
բայց վրան շատ ժամանակ անցեր է :  
**Դիպուածով միտքն եկեր է թէ հե-  
ղուկ անուշագրով փորձէ . և տեսեր է  
որ օրդերուն վրայ շատ մեծ ազդեցու-  
թիւն ըրեր է : || ասն զի մէկէն այս  
անասնիկները , որ մինչեւ նոյն ատենը  
սաստիկ թոյներուն ու թթուներուն  
դէմ դլեր էին , ասով կարկամեր ու ա-  
ծուխ դարձեր են : || նաևշագրին այս  
յատկութիւնա տեսնելով , մաածեց հե-  
ղինակը որ ասիկայ շատ դիւրութեամբ  
ու օգտակար կերպով կրնայ գործա-  
ծուիլ . ուստի այս օրդերով լեցուն խել  
մը հող առաւ ու քիչ մը կրի հետ խառ-  
նեց , վրան ալ անուշագրի աղ աւելք-  
նելով : || յս կիրս և հետզհետէ գոյա-  
ցած կազզ , որ հեղուկ անուշագրին  
հետ նոյն զօրութիւնն ունին , բոլոր  
օրդերը ջարդեցին ու գրեթէ բոլորավն  
ունչացուցին :**

Ծակ որ այս բանս , ինչպէս որ հեղինակը կ'ապահովցընէ , յաջողելու ըլլայ , երկրագործութեան շատ օգտակար կ'ըլլայ , առանց վնաս մը հասցընելու տընկոց աշխանը :

ՀԱՅԵՐԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Բանական էտաղմութեան Փայլածուի : —  
Փայլածուին ձեւը կլոր է , և ուրիշ մո-  
լորակաց պէս լցուը արևեէն կ'առնու .  
դիտակով վրան լուսնի պէս երեսովներ  
կը տեսնուին , բայց մարմինը ամբողջ  
որոշ չերեար , այլ պըլալըլայող բոցի  
մը կը նմանի : Վիհայն Ըստօդէր աս-  
տեղաբաշխը կարող եղեր է այս մոլո-  
րակիս վրայ որոշ դիտողութիւններ ը-  
նել , և կը կարծէ թէ թանձր մթն-

Առաջին հատուածը տես երես 255: